



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ.՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2019 թվականի N 43-Ա

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝ **Մասիս քաղաքային համայնքի
ավագանին որոշում է.**

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Մասիս քաղաքային համայնքի
ավագանու 2019 թվականի մայիսի 23-ի նիստի օրակարգը՝

1.ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՌԻՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՏԵՍԱԿՆ ՈՒ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՎԱՂԻՆԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶՔԱՂԵՅՐԱԾ
ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

6.ՌՈՒԲԵՆ ԼԵՎՈՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ԱՐՏՈՒԾ ԱՂԱՍԻՆԻ ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԳԱՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ


ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷՂՎԱՐԴ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷՂՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ



Համայնքի ղեկավար՝



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ.՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 44-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, „Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի „բ,, կետի, 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ֆինանսական բաժնի պետի զեկույցը (զեկույցը կցվում է)՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1. 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդը 70 644 901.50 դրամ և ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը 135 919 817.8 դրամ ուղղել 2019 թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի մուտքերին՝ համաձայն կից հավելված 1-ի /հատված 4-ի և 5-ի/:

2. 2019թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի մուտքերը ավելացնել 337683919,30 դրամով, որից սուբվենցիա՝ 131119200 դրամ և տարեսկզբի մնացորդը՝ 206 564 719.30 դրամ համաձայն կից հավելված 1-ի /հատված 4-ի և 5-ի/:

3. 2019թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը վերաբաշխել համաձայն հավելված 2-ի:

4. 2019 թ. համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը նվազեցնել 19355,0 հազար դրամով՝ և ծախսերը վերաբաշխել համաձայն հավելված 3-ի:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԳԱՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԷՂՎԱՐԴ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷՂՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2019 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

Համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի տարեսկզբի մնացորդները և համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված հայտերով նախատեսված ակնկալվող սուբվենցիան բյուջեի ֆոնդային մասի եկամուտներում ներառելու համար անհրաժեշտ է ֆոնդային մասի մուտքերը ավելացնել 337683.9 հազար դրամի չափով, որից՝ տարեսկզբի մնացորդը՝ 206564.7 հազ. դրամ (վարչական մասից՝ 70644.9 հազար դրամ, ֆոնդային մասից՝ 135919.8 հազար դրամ) և ակնկալվող սուբվենցիան՝ 131119.2 հազար դրամ:

Համայնքի բյուջեի Ֆոնդային մասում ավելացված 337683.9 հազար դրամ մուտքերի հաշվին նախատեսվում է կատարել հետևյալ կապիտալ ծախսերը՝

	<i>Անվանում</i>	<i>գումար հազ. Դրամ</i>
1	Գրադարանի և ՄՊՄԿ-ի ջեռուցման համար նախատեսված ծախսերն ավելացնել	1525,0
2	5-10-րդ փողոցների և Արարատյան փողոցի մի հատվածի լուսավորման ցանցի կառուցման նախահաշվային աշխատանքների համար նախատեսված ծախսերը պակասեցնել	-220
3	Ճանապարհների խճապատման և հարթեցման աշխատանքների համար նախատեսված ծախսերն ավելացնել	1025,0
4	Ն. Թաղ 13 շենքի բակի բազմաֆունկցիոնալ խաղահրապարակի կառուցում	11636,0
5	Թիվ 1 մանկապարտեզի հիմնանորոգում	14798,1
6	Թիվ 5 մանկապարտեզի սյունների հիմնանորոգում	3680,0
7	Մանկապարտեզների համար գույքի ձեռք բերում	13462,6
8	Գրադարանի գրքային ֆոնդի համալրման համար գրականության ձեռք բերում	500,0
9	Համայնքի 3-րդ թաղ. 14, 18 շենքերի բակի բարեկարգման աշխատանքներ	22504,0
10	Բազմաբնակարան շենքերի բակերում տաղավարների կառուցում	998,0
11	Մասիս Կայարանի թիվ 12 շենքի տանիքի հիմնանորոգում	5787,4

12	Թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգում	60767,2
13	Քաղաքի 5-6-7-րդ թաղամասերում գազիֆիկացման աշխատանքներ	135727,8
14	5-10-րդ փողոցների և Արարատյան փողոցի մի հատվածի լուսավորության ցանցի կառուցում	64002,8
15	Ավտոճանապարհային նշանների տեղադրման և ճանապարհների գծանշման նախագծի ձեռք բերում.	1000,0
16	Նոր թաղամասի թիվ 16 շենքի բակի բարեկարգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	60,0
17	Աղբահանության վճարների գանձման և հաշվառման ծրագրի ձեռք բերում	200,0
18	Տեսադիտման համակարգի տեղադրման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	230,0
	Ընդամենը ծախսեր	337683,9

2019թ համայնքի բյուջեի վարչական մասում անհրաժեշտ է նախատեսել հետևյալ ծախսերը՝

1. Եվրասիական բանկի կողմից համայնքի ոռոգման ցանցի արդիականացման ծրագրին կապիտալ դրամաշնորհի հատկացում 8500.0հազար դրամ.
2. Բազմաբնակարան շենքերի տանիքների ընթացիկ նորոգման համար 3250.0հազար դրամ:
3. Ճանապարհների ընթացիկ նորոգման համար՝ 7500.0հազար դրամ:
4. ՀԾ-հաշվապահ 7 ծրագրի սպասարկման վճար՝ 105.0 հազար դրամ:
5. Վերոնշյալ ծախսերն իրականացնելու համար անհրաժեշտ է վարչական բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 19355.0հազար դրամի չափով:

Աշխատակազմի քարտուղարի մ/լ

Ֆինանսական բաժնի պետ



Լ. Աստաբացյան

Ն. Սահակյան

ՀԱՏՎԱԾ 4

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ
ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)**

(հազար դրամով)

Տողի NN		Ընդամենը (ս.4+ս.5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
8000	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)	-206564,719		-206564,719

ՀԱՏՎԱԾ 5

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ
ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տողի	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
	անվանումները	NN		վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
8010	ԸՆԴԱՄԵՆԸ՝ (տող 8100+տող 8200), (տող 8000 հակառակ նշանով)		206564,719	0,0	206564,719
	այդ թվում՝				
8100	Ա. ՆԵՐՔԻՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐ (տող 8110+տող 8160)		206564,719	0,000	206564,719
	այդ թվում՝				
8110	1. ՓՈՒՍԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 8111+տող 8120)		0	0	0
	այդ թվում՝				
8111	1.1. Արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության)			X	
8160	2. ՖԻՆԱՆՍԱՎԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (տող 8161+տող 8170+տող 8190- տող 8197+տող 8198+տող 8199)		206564,719	0,000	206564,719
	այդ թվում՝				
8161	2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն				
	որից՝				
8162	- համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր	9213		X	
8163	- իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր	9213		X	
8164	- բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում	6213		X	
8170	2.2. Փոխատվություններ				

	որից՝				
8171	- նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր	9212			
8172	- փոխատվությունների տրամադրում	6212			
8190	2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝ (տող 8191+տող 8194-տող 8193)		206564,719	0,000	206564,719
	այդ թվում՝				
8191	2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ	9320	70644,901	70644,901	X
	որից՝				
8192	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա պարտավորությունների կատարմանը		0,0		X
8193	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս (տող 8191 - տող 8192)		70644,901	70644,901	X
8194	2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ (տող 8195 + տող 8196)	9330	206564,719	X	206564,719
	որից՝				
8195	- առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի		135919,818	X	135919,818
8196	- վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը (տող 8193)		70644,901	X	70644,901
8197	2.4. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս				
8198	2.5. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս				
8199	2.6. Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում (տող 8010- տող 8110 - տող 8161 - տող 8170- տող 8190- տող 8197- տող 8198 - տող 8210)		0,0	0,0	0,0
8199ա	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը			X	
8200	Բ. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (տող 8210)				
	այդ թվում՝				
8210	1. ՓՈՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 8211+տող 8220)				

Աշխատակազմի քարտուղարի ժ.

Ֆինանսական բաժնի պետ



Լ. Աստաբաջյան

Ն. Սահակյան

Մասիս քաղաքային համայնքի 2019 թվականի բյուջեի ֆոնդային մասի եկամուտների և ծախսերի վերաբաշխումը

h/h	բաժին	խումբ	դաս	Փորձառական դասակարգում, նպատակ	հոդված	Գումարի չափը /հազար դրամ/
1	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայութ. Տեսադիտման համակարգի տեղադրման նախագծա- նախահաշվային աշխատանքներ	5134	230,0
2	04	3	2	Նավթամթերք և բնական գազ. Զաղաքի 5-6-7-րդ թաղամասերում գազի ֆիկացման աշխատանքներ	5112	135727,8
3	04	5	1	Ճանապարհային տրանսպորտ. Ավտոճանապարհային նշանների տեղադրման և ճանապարհների գծանշման նախագծի ձեռք բերում. Ճանապարհների խճապատման և հարթեցման աշխատանքների համար նախատեսված ծախսերն ավելացնել	5134	1000,0
4					5113	1025,0
5	05	1	1	Աղբահանում. Աղբահանության վճարների գանձման և հաշվառման ծրագրի ձեռք բերում	5132	200,0
6	06	1	1	Բնակարանային շինարարություն. Նոր թաղամասի թիվ 16 շենքի բակի բարեկարգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	60,0
7				Մասիս Կայարանի թիվ 12 շենքի տանիքի հիմնանորոգում	5113	5787,4
8				Համայնքի 3-րդ թաղ. 14, 18 շենքերի բակի բարեկարգման աշխատանքներ	5113	22504,0
9	06	4	1	Արտաքին լուսավորություն. 5-10-րդ փողոցների և Արարատյան փողոցի մի հատվածի լուսավորության ցանցի կառուցում	5112	64002,8
10				5-10-րդ փողոցների և Արարատյան փողոցի մի հատվածի լուսավորման ցանցի կառուցման նախահաշվային աշխատանքների համար նախատեսված ծախսերը պակասեցնել	5134	-220
11	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ. Բազմաբնակարան շենքերի բակերում տաղավարների կառուցում	5112	998,0
12				Ն. Թաղ 13 շենքի բակի բազմաֆունկցիոնալ խաղահրապարակի կառուցում	5112	11636,0
13	08	2	1	Գրադարաններ. Գրադարանի գրքային ֆոնդի համալրման համար գրականության ձեռք բերում	5132	500,0
14	09	8	1	Կրթություն այլ դաերին չպատկանող. ՄՊՍԿ-ի և գրադարանի ջեռուցուման համար նախատեսված ծախսերն ավելացնել	5113	1525,0
15				Թիվ 1 մանկապարտեզի հիմնանորոգում	5113	14798,1
16				Թիվ 5 մանկապարտեզի սյուների հիմնանորոգում	5113	3680,0

17			Թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգում	5113	60767,2
18			Մանկապարտեզների համար գույքի ձեռք բերում	5122	13462,6
			Ընդամենը ծախսեր		337683,9



Աշխատակազմի բարձրագույն անդամ

L. Աստաբացյան

Ֆինանսական բաժնի պետ

Ն.Սահակյան

Մասիս բաղաբային համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի ծախսերի վերաբաշխումը

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառնական դասակարգում, նպատակ	հոդված	Ծախսեր Գումարի չափը /հազար դրամ/
1	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ. ՀԾ-հաշվապահի 7 ծրագրի սպասարկում	4232	105,0
2	04	2	4	Ոռոգում. Եվրասիական բանկի կողմից համայնքի ոռոգման ցանցի արդիականացման ծրագրին կապիտալ դրամաշնորհի հատկացում	4622	8500,0
3	04	5	1	Ճանապարհային տրանսպորտ. Ճանապարհների ընթացիկ նորոգում	4251	7500,0
4	06	1	1	Բնակարանային շինարարություն. Բազմաբնակարան շենքերի տանիքների ընթացիկ նորոգում	4251	3250,0
5	11	1	2	Պահուստային ֆոնդ. Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը պակասեցնել	4891	-19355,0
Ընդամենը						0,0



Աշխատակազմի բարձրագույն օգնական

Լ. Աստաբաջյան

Ֆինանսական բաժնի պետ

Ն. Սահակյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ.՝ (0236) 43040, 40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2019 թվականի N 45-Ա

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՏԵՍԱԿՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, „Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի և 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնքի 2019 թվականի տեղական վճար.

1. Տեսակը՝ էլեկտրական սկեյտբորդեր, հեծանիվներ, ինքնագնացներ, մանկական էլեկտրական ավտոմեքենաներ, մանկական ոտնակավոր մեքենաներ բնակչությանը տրամադրելու նպատակով համայնքի սեփականություն հանդիսացող հանրային օգտագործման տարածքները օգտագործելու համար.

2. Դրույքաչափը՝ էլեկտրական սկեյտորդեր, հեծանիվներ, ինքնագնացներ, մանկական էլեկտրական ավտոմեքենաներ, մանկական ոտնակավոր մեքենաներ բնակչությանը տրամադրելու նպատակով համայնքի սեփականություն հանդիսացող հանրային օգտագործման տարածքները օգտագործելու համար 1 միավոր սարքի համար ամսական 1500 /հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԳԱՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝



ԴԱՎԻԹ ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ' (0236) 43040,40440, էլ. փոստ' masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2019 թվականի N 46-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մասիս համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ) /կցվում է/:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԳԱՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ԱՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Handwritten signatures in blue ink, including the names Garik, Edmond, and Vahan.

Համայնքի ղեկավար՝



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ս Կ Ո Յ Ո Ղ Ո

Ս Կ Ո Յ Ո Ղ Ո

Large handwritten signature in blue ink at the bottom of the page.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍՀԱՄԱՅՆՔ

Համայնքի 2019 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանը
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 23.05.2019թ. թիվ 46-Ա որոշմամբ

ՄԱՍԻՍ 2019թ.

Բովանդակություն

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները	4
2. Համայնքի 2019 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)	8
3. Համայնքային գույքի կառավարման 2019թ. ծրագիրը	28
4. Համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը	32
5. Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը	35

Ներածություն

ՏԱՊ-ը տեղական ժողովրդավարության զարգացման, ՏԻ-անը բնակիչների մասնակցության, համայնքի ծրագրային և ֆինանսական կառավարման, ինչպես նաև համայնքը արտաքին աշխարհին ներկայացնելու հանրային կառավարման ստորին՝ համայնքային մակարդակում գործող հիմնական ծրագրային փաստաթուղթ է: Այն համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար նախատեսված ներդրումային (մարդկային, ֆինանսական, վարչական, սոցիալական, գույքային և տեխնիկական) ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, որտեղ արտացոլված նպատակների, խնդիրների, մուտքային և ելքային ստույգ հաշվարկների ու արդյունքային ցուցանիշների, ինչպես նաև մոնիթորինգի և գնահատման համակարգի թելադրանքով ճշգրտվում և պլանավորվում են վերոնշյալ ռեսուրսները: Այն նաև թույլ է տալիս հիմնավորված, փաստարկված (արդյունքային ցուցանիշների միջոցով) կերպով գնահատել համայնքի և համայնքում գործող այլ կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի արդյունավետությունը մեկ տարվա ընթացքում՝ հիմք ստեղծելով Մասիս համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ճշգրտման և հաջորդ տարիների պլանավորման և բյուջետաորման համար:

Մասիս քաղաքային համայնքի 2019թ. ՏԱՊ-ի մշակման հիմնական նպատակներն են՝

- Համակարգել համայնքում տվյալ տարվա անելիքները, այդ թվում՝ սահմանելու համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայություններն ու առաջնահերթությունները, հաշվառելու և գնահատելու համայնքի ներքին ռեսուրսները, համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, դրանց հիման վրա հաշվարկելու համայնքի համախառն ռեսուրսները և բացահայտելու ծախսերի կատարման պակասուրդը (դեֆիցիտը),
- սահմանել ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված ծրագրերի և միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման ռազմավարությունը, նախանշելու այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են համայնքում լրացուցիչ միջոցներ ներգրավելու համար՝ համագործակցելով պետական, միջազգային, հանրային և մասնավոր գործընկերների հետ,
- համախմբել համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները ՀՀԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և ոլորտային հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- շահկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները,
- մշակել և օգտագործել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

Մասիս քաղաքային համայնքի 2019թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից.

1-ին բաժնում սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

2-րդ բաժնում ներկայացվում է համայնքի 2019 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

3-րդ բաժնում ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2019 թվականի ծրագիրը:

4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Մասիսը բարեկարգ, մաքուր, լուսավոր համայնք է, որն ունի բնակչության համար բավարար կենսապայմաններ և աչքի է ընկնում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման բարձր որակով:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	17	12
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	42.2	45
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	21965	22100

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
	Համայնքի բնակիչների բավարարվածությունը համայնքապետարանի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, %	87	97
Ապահովել թափանցիկ, արդյունավետ և բնակչությանը որակյալ հանրային ծառայություններ մատուցող տեղական ղեկավարության իրականացում	Համայնքապետարանի գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը, %	60	70
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	42.2	45
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
2019 թվականին պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել			

Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
Մանկապարտեզներում և այլ ենթակա հաստատություններում ազդարարման համակարգերի տեղադրում		-	-
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը	Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, %	40	60
Ոլորտ 5. Հողօգտագործում			
2019 թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել		-	-
Ոլորտ 6. Տրանսպորտ			
Բարելավել ներհամայնքային ճանապարհների անցանելիության մակարդակը և ապահովել ճանապարհների մշտական անցանելիությունն ու տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը	Բարեկարգ ներհամայնքային ճանապարհների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, %	47	49
	Հետիոտների և վարորդների բավարարվածության աստիճանը ներհամայնքային ճանապարհների վիճակից, %	80	90
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
2019 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել		-	-
Ոլորտ 8. Կրթություն			
Ապահովել համայնքում կրթական ծառայությունների արդյունավետ մատուցումը	Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, %	3	5
	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, %	85	90
	Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	655	715

	Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, %	11	12
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
Ապահովել տեղական ինքնակառավարման մարմնի կողմից համայնքի բնակչությանը մշակույթի և երիտասարդության հետ տարվող որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	70	75
	Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճը, %	1	2
	Համայնքում մշակութային հիմնարկ հաճախող երեխաների տեսակարար կշիռն դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի մեջ, %	35	40
Ոլորտ 10. Առողջապահություն			
2019 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել		-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
Բարելավել համայնքի մարզական կյանքը և ապահովել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում որակյալ ծառայությունների մատուցում	Համայնքի բնակիչների համար սպորտի ծառայությունների հասանելիությունը, 90%	85	90
	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող սպորտի ծառայությունից, 60%	90	95
	Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը համապատասխան տարիքի երեխաների թվի կազմում, 35%	45	50
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
Օգնել համայնքի կարիքավոր, վիրավոր և զոհված ազատամարտիկների ընտանիքներին՝ բարելավելու նրանց սոցիալական վիճակը	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից, %	80	85

Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
Ապահովել համայնքում գյուղատնտեսության բնագավառում որակյալ մասնագիտական ծառայությունների մատուցումը և նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը	Գյուղատնտեսության բնագավառում զբաղված բնակիչների տեսակարար կշիռն ընդհանուր բնակչության կազմում, %	18	22
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
2019 թվականին Անասնաբուծության ոլորտում կազմակերպվել են հակահամաճարակային միջոցառումներ		42	50
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
Ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումը և չեզոքացումը, ստեղծել բնակչության համար հարմարավետ և ոլոգիապես անվտանգ պայմաններ	Աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ ծառայությունների մատուցումից բնակչության բավարարվածության աստիճանի բարձրացում, %	15	20
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
2019 թվականին զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:		-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
2019 թվականին կազմակերպված բոլոր համայնքային հարցերին ուղղված քննարկումները եղել են բաց, ուղիղ հեռարձակմամբ կազմակերպված, քաղաքացիների տեղեկացվածության նպատակով:		-	-

2. Համայնքի 2019 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
Ոլորտ 1. Ընդհանուր			
1.	Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում	148802.1	ընդհանուր համայնքային
Ընդամենը		148802.1	-
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
1.	2019 թվականին պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-	-
Ընդամենը		-	-

Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
1.	Հակահրդեհային վահանակների և կրակմարիչների ձեռք բերում և տեղադրում	90.0	-
Ընդամենը		90.0	-
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Մասիս բնակավայրի բազմաբնակարան շենքերի տանիքների ընթացիկ նորոգում, կառույցների ընթացիկ նորոգում և բակային տարածքներում ցայտադրյալների պահպանում, շենքերի բակերում ապօրինի շին. ապամոնտաժում	4230.0	ընդհանուր համայնքային
2.	Մասիս բնակավայրի բակային տարածքներում հանգստի տաղավարի կառուցում և խաղահրապարակների ստեղծում, ավագ դպրոցի հարակից ցանկապատի կառուցում	18352.0	ընդհանուր համայնքային
3.	Մասիս բնակավայրի շենքերի, շինությունների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ընթացիկ նորոգում և հիմնանորոգում	975.0	ընդհանուր համայնքային
4.	Մասիս բնակավայրի շենքերի բակերի բարեկարգում, տանիքների հիմնանորոգում	28716.4	
5.	5-6-7-րդ թաղամասերում գազաֆիկացման աշխատանքներ, գրադարանի գազատարի իրականացում	136337.8	
6.	Փողոցային լուսավորության իրականացում, փողոցների լուսավորության էլ էներգիայի ծախս, փողոցների լուսավորության համակարգի սպասարկում, կապիտալ դրամաշնորհի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնման համար	79782.8	ընդհանուր համայնքային
Ընդամենը		268394.0	
Ոլորտ 5. Հողօգտագործում			
	2019 թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ոլորտ 6. Տրանսպորտ			
	Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում, խճապատում, հարթեցում, ավտոճանապարհային նշանների տեղադրման և զծանշման նախագիծ	10900.0	ընդհանուր համայնքային
Ընդամենը		10900.0	-
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
	2019 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 8. Կրթություն			
1.	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար գույքի ձեռք բերում	13752.6	
2.	Նախադպրոցական և արտադպրոցական կրթության կազմակերպում	301157.4	ընդհանուր համայնքային
3.	Նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի, սյուների հիմնանորոգում	89380.0	ընդհանուր համայնքային
Ընդամենը		404290.0	-
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			

	Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում, խճապատում, հարթեցում, ավտոճանապարհային նշանների տեղադրման և գծանշման նախագիծ	10900.0	ընդհանուր համայնքային
Ընդամենը		10900.0	-
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
	2019 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 8. Կրթություն			
1.	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար գույքի ձեռք բերում	13752.6	
2.	Նախադպրոցական և արտադպրոցական կրթության կազմակերպում	301157.4	ընդհանուր համայնքային
3.	Նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի, սյունների հիմնանորոգում	89380.0	ընդհանուր համայնքային
Ընդամենը		404290.0	-
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող սպորտային խաղեր			
	Մշակութային և հոգևոր կյանքի բարելավում	20083.1	ընդհանուր համայնքային
Ընդամենը		20083.1	-
Ոլորտ 10. Առողջապահություն			
	2019 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
1.	Համայնքում մարզական կյանքի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում, մարզահագուստ, պատվոգրեր սպորտի քնազավառի համար	1050.0	ընդհանուր համայնքային
Ընդամենը		1050.0	-
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
1.	Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին, սոցիալապես խոցելի խավի աշակերտների համար դասագրքերի համար այլ նպաստ, նվիրատվություն հասարակական կրոնական կազմակերպություններին	17100.0.0	ընդհանուր համայնքային
Ընդամենը		17100.0	-
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
1.	Ոռոգման համակարգի բարելավման համար կապիտալ դրամաշնորհ	8500.0	
2.	Գյուղատնտեսական մասնագիտական ծառայությունների մատուցում	285.0	ընդհանուր համայնքային
Ընդամենը		8785.0.0	-
Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա			
1.	2019 թվականին անասնաբուժության ոլորտում իրականացվել են խոշոր պլանի պատվաստումներ		ընդհանուր համայնքային
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Աղբահանության անդորրագրերի ձեռք բերում	200.0	

2.	Համայնքի տարածքում աղբահանության, սանիտարական մաքրման և կանաչապատ տարածքների խնամման և կատաղած շների դեմ պայքարի աշխատանքների իրականացում	78980.0	ընդհանուր համայնքային
Ընդամենը		79180.0	-
Ոլորտ 16. Ջրոսաշրջություն			
1.	2019 թվականին զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
1.	2019 թվականին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ընդհանուրը		958674.2	-

	<p>6. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման մակարդակը, 90%</p> <p>7. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, 4 օր</p>			<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ol style="list-style-type: none"> 1. Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված պահպանման ծախսեր՝ 146140.8 հազ. դրամ 2. Համայնքի աշխատակազմի աշխատակիցների թիվը՝ 60 3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1 4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք 5. Աշխատակազմում առկա համակարգային սարքերի և սարքավորումների թիվը 103 6. Համայնքի պաշտոնական համացանցային կայք http://www.masicity.am/
Միջոցառումներ				
<ol style="list-style-type: none"> 1. Աշխատակազմի բնական գործունեության ապահովում 2. Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ 3. Համակարգային ծառայությունների ձեռք բերում 4. Մասնագիտական ծառայությունների ձեռք բերում 				
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում				
2019 թվականին պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:				
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում				
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն				
<p>Ոլորտային նպատակ</p> <p>Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը</p>	<p>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</p> <p>Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, 60%</p>			
<p>Ծրագրի նպատակ</p> <p>Մասիս բնակավայրում ունենալ վերանորոգված տանիքներով բազմաբնակարան տանիքներ, 2 ենքեր, ցայտաղբյուրներով ապահովված բակային տարածքներ</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Երկուսուկես տանիք ունեցող բազմաբնակարան շենքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, 1% ✓ Բակերի առկա ցայտաղբյուրների քանակը՝ 23 	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>2019թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>

<p>Միջանկյալ արդյունք 1 Մեծացել է բնակավայրի գրավչությունը</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Բազմաբնակարան շենքերի վերանորոգված տանիքների ընդհանուր մակերեսը՝ 170 քմ ✓ Բնակիչների բավարարվածությունը բնակարանային շինարարության ոլորտում մատուցվող ծառայություններից: 80% ✓ Շինարարական աշխատանքների իրականացման ժամկետը, 1 տարի 	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական սարակազմային կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>2019թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 2487.5 հազար դրամ ✓ Վերանորոգման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը 25 				
<p>Միջոցառումներ</p>				
<p>1. Մասին բնակավայրի բազմաբնակարան շենքերի տանիքների ընթացիկ նորոգում, բակային տարածքներում ցայտաբյուրների պահպանում</p>				
<p>Միջանկյալ արդյունք 2 Մեծացել է բնակավայրի գրավչությունը</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Բնակիչների բավարարվածությունը հանգստի և երեխաների ժամանցի ապահովման ապահովման ստեղծում ✓ Բնակիչների բավարարվածությունը հանգստի և երեխաների ժամանցի ապահովման ապահովման ստեղծում 	<p>ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>2019թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 6419.5 հազար դրամ ✓ Վերանորոգման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը 25 				
<p>Միջոցառումներ</p>				
<p>2. Մասին բնակավայրի բակային տարածքներում հանգստի տաղավայրի կառուցում և խաղահրապարակների ստեղծում</p>				
<p>Միջանկյալ արդյունք 1 Մեծացել է բնակավայրի գրավչությունը</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Բնակիչների բավարարվածությունը հանգստի և երեխաների ժամանցի ապահովման ապահովման ստեղծում ✓ Բնակիչների բավարարվածությունը հանգստի և երեխաների ժամանցի ապահովման ստեղծում 	<p>ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>2019թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 6419.5 հազար դրամ ✓ Վերանորոգման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը 25 				
<p>Միջոցառումներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Մասին բնակավայրի բակային տարածքներում հանգստի տաղավայրների կառուցում և խաղահրապարակների ստեղծում 				

Ծրագիր 3. Մասիս բնակավայրի շենքերի, շինությունների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ընթացիկ նորոգում և հիմնանորոգում

<p>Ծրագրի նպատակ Մասիս բնակավայրի բնակիչների առողջության և սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման ապահովում</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Բնակիչների բավարարվածությունը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վիճակից՝ լավ 	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p> <p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հարկության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>2019թ. հունվար-դեկտեմբեր</p> <p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Միջանկյալ արդյունք 1 Մեծացել է բնակավայրի գրավորությունը</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Բազմաբնակարան շենքերի ընթացիկ նորոգված կոյուղագծի երկարությունը՝ 100 Գ/մ ✓ Շենքերի, շինությունների հիմնանորոգված կոյուղագծերի ընդհանուր երկարությունը՝ 170 Գ/մ ✓ Շենքերի, շինությունների հիմնանորոգված խմելու ջրագծերի ընդհանուր երկարությունը՝ 170 Գ/մ ✓ Բնակիչների բավարարվածությունը ջրամատակարարման ոլորտում մատուցվող ծառայություններից, 60% ✓ Շինարարական աշխատանքների իրականացման ժամկետը, 1 տարի 	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար</p>	<p>2019թ. հունվար-դեկտեմբեր</p> <p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Միջոցառումներ Մասիս բնակավայրի շենքերի, շինությունների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ընթացիկ նորոգում և հիմնանորոգում</p>		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 8486.0 հազար դրամ ✓ Վերանորոգման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը 20 	

<p>Ծրագրի նպատակ Բարձրացնել Մասիս համայնքի փողոցների երթևեկության անվտանգության մակարդակը և դրանք դարձնել հարմարավետ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Փողոցների երթևեկության անվտանգության մակարդակը տրանսպորտային միջոցների և հետիոտների համար՝ բավարար 	<p>Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ.</p>	<p>Համայնքի ղեկավար, բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>2019թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Միջանկյալ արդյունք 1 Մասիս համայնքի փողոցները դարձել են հարմարավետ և անվտանգ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Փողոցների իրականացված արտաքին լուսավորության համակարգի երկարությունը, 2 կմ ✓ Իրականացված գիշերային լուսավորության համակարգի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ 3% ✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ամռանը 4 ժամ ✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ձմռանը 6 ժամ ✓ Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից, 60% 	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հարակրթյան կազմակերպություններ և խմբեր, քննիչներ</p>	<p>Համայնքի ղեկավար, բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>2019թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>
<p>Միջոցառումներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Մասիս բնակավայրի լուսավորության համակարգի սպասարկում ✓ Մասիս բնակավայրի գիշերային լուսավորվածությամբ չափահավակված փողոցներում և շենքերի բակերում գիշերային լուսավորության անցկացում (եղ համակարգերով), փողոցների լուսավորության համակարգի կառուցում 	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ՝ 23010.0 հազ. դրամ ✓ Համայնքապետարանից՝ փողոցների գիշերային լուսավորության աշխատանքները կազմակերպող և վերահսկող աշխատակիցների թիվը՝ 3 ✓ Առկա լուսավորության համակարգի երկարությունը՝ 2 կմ ✓ Առկա լուսավորության համակարգի հենասյուների թիվը՝ 52 ✓ Առկա դրոսիների թիվը՝ 50 ✓ Առկա մեկնարկիչների թիվը՝ 50 	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ՝ 23010.0 հազ. դրամ ✓ Համայնքապետարանից՝ փողոցների գիշերային լուսավորության աշխատանքները կազմակերպող և վերահսկող աշխատակիցների թիվը՝ 3 ✓ Առկա լուսավորության համակարգի երկարությունը՝ 2 կմ ✓ Առկա լուսավորության համակարգի հենասյուների թիվը՝ 52 ✓ Առկա դրոսիների թիվը՝ 50 ✓ Առկա մեկնարկիչների թիվը՝ 50 	<p>Համայնքի ղեկավար, բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>2019թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>
<p>Ոլորտ 5. Հողօգտագործում</p>					

2018 թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում

Ոլորտ 6. Տրանսպորտ

Ոլորտային նպատակ

Բարելավել ներհամայնքային ճանապարհների անցանելիության մակարդակը և ապահովել ճանապարհների մշտական անցանելիությունն ու տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը

Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ

- ✓ Բարելավող ներհամայնքային ճանապարհների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, 49%
- ✓ Հետիոտների և վարորդների բավարարվածության աստիճանը ներհամայնքային ճանապարհների վիճակից, 90%

Ծրագիր 1. Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում, մայրճերի կառուցում

<p>Ծրագրի նպատակ</p> <p>Բարելավել ներհամայնքային ճանապարհների անցանելիության մակարդակը և ապահովել ճանապարհների անվտանգ երթևեկությունը</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ներհամայնքային ճանապարհների անցանելիության և անվտանգ երթևեկության մակարդակը՝ բավարար 	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>2019թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Միջանկյալ արդյունք 1</p> <p>Ներհամայնքային ճանապարհները բարելավող և անցանելի են</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների երկարությունը, 1.2 կմ ✓ Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուր կազմում, 2.3% ✓ Կատուցված մայթի երկարությունը՝ 750 քմ ✓ Ճանապարհների արդվ և ավազով մշակման օրերի թիվը 45 ✓ Հետիոտների և վարորդների բավարարվածության աստիճանը ներհամայնքային ճանապարհների վիճակից, 90 % ✓ Աշխատանքների իրականացման ժամկետը, 1 տարի 	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական սարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>

<p>Միջոցառումներ</p> <ol style="list-style-type: none"> 1. Մասիս համայնքի ներհանայնքային ճանապարհների թարեկարգման աշխատանքների իրականացում 2. Ճանապարհների փոսային նորոգման աշխատանքների իրականացում 3. Մայթի կառուցում 4. Ձյան ժամանակ ճանապարհների արդվ ու ավազով մշակում 	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 16946.0հազար դրամ ✓ Ներքնակալայրային ճանապարհների թարեկարգման աշխատանքներում ներգրավված տեխնիկայի քանակը 5 ✓ Տեղափոխվող հողի և խճի ծավալը 2 տոննա ✓ Համայնքապետարանից միջնակալայրային ճանապարհների թարեկարգման աշխատանքները կազմակերպող աշխատակիցների թիվը 1
<p>Ոլորտ 7.Առևտուր և ծառայություններ 2018 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում</p>	
<p>Ոլորտ 8. Կրթություն</p> <p>Ոլորտային նպատակ Ապահովել համայնքում կրթական ծառայությունների արդյունավետ մատուցումը</p>	<p>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, 5% ✓ Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, 90% ✓ Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, 80% ✓ Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, 17%
<p>Ծրագիր 1. Նախադպրոցական և արտադպրոցական կրթության կազմակերպում</p>	
<p>Ծրագրի նպատակ Բարձրացնել նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ծնողների կարծիքը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության վերաբերյալ՝ գերազանց ✓ Ծնողների կարծիքը մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայության վերաբերյալ, լավ <p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ ՆՈՒՀ-եր հաճախող երեխաների ընդհանուր թիվը՝ 655 ✓ Մանկապարտեզի խմբերի թիվը՝ 25 ✓ ՆՈՒՀ-ներում աշխատող զարգացած երեխաներ
<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>	<p>Համայնքի հունվար-դեկտեմբեր</p> <p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, ՆՈՒՀ-երի և արտադպրոցակա և ուսումնական հաստատությունների տնօրեններ</p> <p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>

	<ul style="list-style-type: none"> ✓ աշխատակիցների թիվը 136 ✓ Մանկապարտեզում օրվա ընթացքում սննդի տրանսպորտն թիվը 3 ✓ Նախադպրոցական կրթության ծառայության մատուցման ժամաքանակը օրվա ընթացքում, 8 ժամ ✓ ՀՈԱԿ-ների աշխատակիցների թիվը՝ 231 ✓ Արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների թիվը 317 ✓ Մատուցվող նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության ծնադասարանների մատուցվող ծառայությունների բավարարվածության աստիճանի բարձրացում, 15% ✓ ՆՈՒՀ-երի և ՀՈԱԿ-ների տարեկան ջեռուցման օրերի թիվը՝ 141 օր 	կերպարություններ և հանրեր, բնակիչներ	
Միջոցառումներ <ul style="list-style-type: none"> ✓ Մասիս համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում ✓ Մասիս համայնքի արտադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում 	Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 286169.1 հազար դրամ ✓ Մասիս համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը՝ 6 ✓ «Մասիսի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի շենք և գույք ✓ «Մասիսի Սոնո Բարաջանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենք և գույք ✓ «Մասիսի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ-ի շենք և գույք 		
Ծրագիր 2. Նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի, սյուների հիմնանորոգում Ծրագրի նպատակ Ապահովել նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցման համար շենքային բարենպաստ պայմաններ	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ <ul style="list-style-type: none"> ✓ Ծնողների կարծիքը նախադպրոցական կրթության ծառայության մատուցման համար շենքային պայմանների վերաբերյալ բավարար 	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, ՆՈՒՀ-երի
			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն 2019թ. հունվար-դեկտեմբ

Միջանկյալ արդյունք 1 Ապահով, անվտանգ և բավարար շենքային պայմաններում նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցում	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Հիմնանորոգված նախադպրոցական ուսումնական հաստատությունների տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, 0 % ✓ ՆՈՒՀ-եր հաճախող երեխաների ընդհանուր թվի աճ, 5% ✓ Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթական ծառայության մատուցման պայմաններից, 80%	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բաղաբացիակաճի սարակության կազմակերպություններ և խմբեր, ընակիչներ	տնօրեններ	եր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ ✓ «Մասիսի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 2-նշքի, «Մասիսի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 2-նշքին «Մասիսի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի սյունների հիմնանորոգման աշխատանքների իրականացման նախաձեռնախառնաշաղկապի փաստաթղթերի ձեռքբերում ✓ Հիմնանորոգման աշխատանքների իրականացման կապալառու կազմակերպության մրցույթով ընտրություն և հարթող կազմակերպության հետ պայմանագրի կնքում, ✓ «Մասիսի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 2-նշքի, «Մասիսի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի սյունների հիմնանորոգման աշխատանքների իրականացում և վերահսկում ✓ Աշխատանքների կատարման համընթաց-ընդունման ավարտական ակտերի կազմում և հաստատում	Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 61068.2 հազար դրամ ✓ Վերանորոգման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը՝ 20				
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ Ոլորտային նպատակ Ապահովել տեղական ինքնակառավարման մարմնի կողմից համայնքի ընակչությանը մշակույթի և երիտասարդության հետ տարվող որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը	Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ ✓ Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի ընակիչներին, 75% ✓ Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճը, 2% ✓ Համայնքում մշակութային հիմնարկ հաճախող երեխաների տեսակարար կշիռն դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի մեջ, 40%				
Ծրագիր 1. Մշակութային և հոգևոր կյանքի բարելավում					

